43. ԽՈՐԹ ՄԱՐԸ

Մեհետ իլալ ա, չիլալ մին մարթ, մին կնեգյ, մին ախճիգյ։ Էտ մարթին կնեգյը մրեռնում ա, էտ ախճիգյը շատ ա ասում. — Ապա, մին կնեգյ օզե։

Հարը քյինամ ա մին կնեգյ օզում, պիրում։ Ընգրան ինում ա մին ախճիգյ։ Էտ էրկու ախճիգյը ուրուր նհետ բրիշում չըն։

Կնեգյը մարթին ափաթը կտրում ա, ասում.—Յա քու ըխճըկանըտ կլոխը վարե, յա չէ յըես տոնս ըմ կյամ քյըզանա։

Քշերավ քշրհանա մարթը եր ա կենում ըրբան լծում, ախճիգյը տինում մաչին, քյունում փաղու։

Փաղ ընելիս հարն ասում ա.— Ապան մատտաղ, տու ըտեզ կաց, յըես քյինամ տիեր։ Ըրած փաղ կա, յոր օնիմ, կյամ։ Ըխճըկանը խափում ա, ըրբան լծում յոր օնում փաղը, կյամ տոն։

Էտ ախճիգյը լաց ա ինում։ Վերչը մնամ ա ծմակումը։

Մին պուն ա քթենում, նի մննում պունը, կրակ անում, հաց թխում, թա օտե, մին մոկն ա կյամ, ասում.— Բա՛լա, պատառ հաց տո։

Ախճիգյը տամ ա։ Վեր հացը օտըմ ա, մոկունը էն ըխճըկանն ասում ա.— Էս պունը արչու պուն ա, էս սհաթես կյլական ա, ասե. «Պարև քյըեզ»։ Վախես վուչ հա՞... Արչը մին զընգոլակ ա պիրլական, ասե. «Եք խազ անինքյ»։ Արչը աշկերը կպլական ա, քյըեզ ասե. «Զանգը խազցրու, թա կարիմ փռնիմ, քյըեզ ուտլական ըմ, թա կարիմ վուչ փռնիմ, մին հայրա վրեսկե կտամ»։

Արշը կյամ ա, ըխճրկանը մին զնգոլակ տամ, սկսում ըն խաղ անելը։ Ախճիգյը զնգոլակը տամ ա մոկնեն, ինքյը նի մննում պոժ-կան։ Արշը նան մոկնը էնքան վազվազ ըն անում, արշին հոքյին օզում ա, թա տուս կյա։

Արշն ասում ա.— Նզացալ ըմ, տուս եք, ըշկերես շորը ետ ըրա։

Ախճիգյը տուս ա կյամ։ Մոկնը զանգը տամ ա ուրանն, արշին աշկերը պեց ըն անում։ Արշը քյնամ ա մին հայրա վրեսկե պիրում, տամ ըխճկանը։ Ախճիգյը յոր ա օնում, քյինում։ Տոն քյինալիա հորը շհում ա, մին տրեզ քյինում ըն տոն։ Խորթ մարը վեր տրեսնում չի՞, պլանում ա՞, մին էլ վեր վրեսկեն տեսնում չի,՞ ուրանան քյինում ա՞։

Մարթին ասում ա.— Իմ ախճիգյս էլ տար ծմակը, հանցու վրեսկե պերի։

Հարը տանում ա, թողում ծմակումը, ինքյը քյինում փագ անում։ Վերչումը կյամ ա, թա ախճիգյը պիրի, տրեսնում հի՞նչ... Ախճիգյը նի յա մտալ արշին պունը, հաց ուտելիս մոկումը մին թիքյա օզալ ա, տվալ չի։

Արշը նի յա մննում պունը, գյուդում ա, թա համին ախճիգյն ա, զընգոլակը տամ ա ըխճրկանը, մին մնուտումը փոնում ա, օտում։

Հարը կյամ ա, թա ախճիգյը տանե, տրեսնում վսկոքնեն վեր տեռա։ծ։ Նի յա հանում հայրան, տանում։ Խորթ մարը նախանձո-թունան օզում ա, թա մրեռնե, դե հի՞նչ վեր ա կտրալ ուրուշու հետե, ինքյն ա նի ընգալ։